

## ՄԱԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐՏՈՒՂԱՐԻ ՅԱՏՈՒԿ ՊԱՏՈՒԻՐԱԿԸ ՏԵՍԱԿՑԵՑԱՒ ՆԱԽԱԳԱԸ ԼԱՇՈՒՏԻ ԵՒ ՎԱՐՉԱՊԵՏ ԸԵՍԻ ԸԵՏ

Նախագահ Կոր. Էմիլ Լահուտ եւ վարչապետ Սեյիմ Հրապարկ ՄԱԿի ընդհանուր քարտուղարի յատուկ պատուիրակ Թեյրի Ռոտ Լարսընի վերահաստատեցին Լիբանանի պաշտօնակալ կեցուածքին սկսելու քայլին կէտերը, անոր հետ իրենց գումարած երկու ժողովներուն ընթացքին:

Մուսքին ժողովը գումարուեցաւ կէսօրէ առաջ. Պապատայի պալատին մէջ, եւ անոր աւարտին պաշտօնակալն ոչ մէկ յայտարարութիւն կատարուեցաւ: Բայց Պէյրութի մէջ ՄԱԿի տեղեկատուական կեդրոնը առաջին ժողովին ետք հրապարակեց հետեւեալ հարորագրութիւնը:

«Այսօր (երէկ) առաւօտեան ժամը 9:00ին Թեյրի Ռոտ Լարսըն, ՄԱԿի ընդհանուր քարտուղարի յատուկ պատուիրակը, ժողով մը գումարեց Լիբանանի հանրապետութեան նախագահ Կոր. Էմիլ



Լահուտ եւ Հրապարկի հետ ժողովի ընթացքին:

Լահուտի եւ վարչապետ Սեյիմ Հրապարկի մասնակցութեամբ հանդիպումին նախատակն էր քննարկել ՄԱԿի դերը Ապահովութեան Խորհուրդի թիւ 425 եւ 426 որոշումներու գործադրութեան մէջ. եւ այդ որոշումները կ'անշուղի լիբանանեան բոլոր հողերէն Իսրայէլի հետագումին:

«Ժողովին ներկայ գտնուեցան Լիբանանի արտաքին գործոց նախարար Զուհէյր Համուսն, նախագահ Կոր. Էմիլ

ընդհանուր պահովութեան ուժերու ընդհանուր տնօրէնը, դեսպան Եսիա Մահմաւանի, վարչապետ Սեյիմ Հրապարկի օգնականը, ինչպէս նաեւ Լարսընի ընկերակցող պատուիրակուիները, որուն մաս կը կազմեն Լիբանանի մէջ ՄԱԿի մասնաւկալուր խաղաղարար ուժի հրամանատար Կոր. Քոֆի Օփէնկ, Կոր. Ֆրանս

Շար. Էջ 10

## ԻՍՐԱԵԼԸ ՏԱԿԱԻՆ ԱՌԻԹ ՈՒՆԻ ԸՆԳԱՌԱՋԵԼՈՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿԸ

Կ'ԸՍԵ ԸՄԸԸ

Սուրիա յայտարարեց, որ Միացեալ Նահանգներու հետ կապերը կը շարունակուին, եւ թէ յոյս կայ Իսրայէլի հետ խաղաղութեան բանակցութիւններուն վերսկսելու:

Արտաքին գործոց նախարար Ֆարուք Շարէհ ըսաւ, որ Իսրայէլ տակաւին առիթ ունի ընդառաջելու խաղաղութեան պահանջներուն, բոլոր ճակատներուն վրայ: Շարէհ կը խոստար Եգիպտոսի եւ Սէւուական Արաբիոյ արտաքին գործոց նախարարներուն հետ եռակողմանի հանդիպումի մը աւարտին: Հանդիպումը տեղի ունեցած էր Փայմիրայի մէջ:

Սէուտի նախարար Սէուտ Ֆայսալ, իր կարգին, ըսաւ, որ ղուտ տակաւին փակ չէ խաղաղութեան դիմաց: Ֆայսալ աւելցուց, որ եթէ Նոյնիսկ դուռը գոցուի՝ գայն պիտի վերաբանան, որպէսզի կարելի ըլլայ խաղաղութեան հաստատել Միջին Արեւելքի մէջ: Սէուտի նախարարը դիտել տուաւ նաեւ, որ Փայմիրայի հանդիպումին նպատակն էր միացեալ կեցուածք մը որդեգրել, որ պիտի դառնայ կորիզը արաբական աւելի ընդհանուր կեցուածքի մը:

Շարէհ ըսաւ նաեւ, որ Իսրայէլ կը շարունակէ արգելափակ խաղաղութիւնը՝ մերժելով ընդառաջել Սուրիոյ եւ Լիբանանի արդար եւ համապարփակ խաղաղութեան պահանջին, որ հիմնուած է ՄԱԿի որոշումներուն եւ հողի փոխարէն խաղաղութեան սկզբունքներ վրայ: Շարէհ աւելցուց, որ Սուրիա կ'ուզէ, որ խաղաղութեան գործընթացը հովանաւորող Ուաշինկթըն ըլլայ արդար եւ անկողմնակալ:

(ՌՈՅԹԸՐԸ)

## ՔՈԶԱՐԵԱՆ ԱՄՐԱՊՆԴԵՑ ՀԱՅ - ՌՈՒՍԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Կ'ԸՍԵ Վ. ԳԱՐԻԲԵԼԵԱՆ

ԵՐԵՒԱՆ, 4 (ԱՐՄԷՆՓՐԷՍ). - Հայաստանի նախագահի բանբեր Վահէ Գարրիշեան յայտարարեց, որ հայ-ռուսական յարաբերութիւնները հիմնուած են ռազմավարական շահերու եւ երկու ժողովուրդներու աւանդակալ քարեկամական կապերու վրայ:

Վ. Գարրիշեան կը մեկնաբանէր հայ-ռուսական յարաբերութիւններու վատթարացման մասին մամուլի հրապարակումները, որոնց համաձայն, երկու երկիրներու յարաբերութիւնները պայմանաւորուած են անհատներով:

Անդրադատնալով հայ-ռուսական յարաբերութիւններուն մէջ նախագահ Ռոպէրթ Քոչարեանի դերակատարութեան, Վ. Գարրիշեան ընդգրծեց, որ Ռ. Քոչարեանի իբրեւ վարչապետ, ապա՝ նախագահի շրջանին անոր անձնական ջանքերով հայ-ռուսական յարաբերութիւնները ստացած են աւելի գործնական բնոյթ, աշխուժացած եւ ամրապնդուած են: «Այդ քաղաքականութիւնը պիտի շարունակուի, մենք հաստատակամ ենք պահպանելու եւ այսուհետեւ առաւել քարեկալելու հայ-ռուսական ռազմավարական գործակցութիւնը», ըսաւ նախագահի բանբերը:

## ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՄԲԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՄԵԿԱՐԱՄԵՆ ՎԵՐՋԻՆ ՊԱՇՏՈՆԱԶՐԿՈՒՄՆԵՐԸ

Նախագահ Ռոպէրթ Քոչարեանի գլխաւորութեամբ երկկ կայացաւ կառավարութեան ժողովը, որուն ընթացքին Քոչարեան յանձնարարեց յառաջիկայ օրերուն աղէտի գոտիին, յատկապէս Գիւմրիի մէջ, սկսել շինարարական աշխատանքներու:

Յետ քննարկումներու կառավարութիւնը տուաւ որոշումներ:

Շար. Էջ 10

### ԳԻՄԱԿԻՐՈՒԹԻՒՆԸ «ՔԱԹՈՒՅՆ» ՆԵՐՈՎ ԿԸ ՀԱՐՈՒԱԾԷ ԲԻՐԻԱԹ ՇՄՈՆԱՆ

Հարաւի դիմադրութեան ուժերը երէկ «քաթուշա» տիպի նրբաթղթերով ուժեղացուցին հիւսիսային Իսրայէլը: 3 կողմի վիրաւորուեցաւ եւ բազմաթիւ ուրիշներ դարձան ուժ ստացան վախի եւ անկուրթեան պահանջով:

Հրգովալայի ալիքները քսին, որ 40 «քաթուշա» նետով հարուածած են Բիրիաթ Շմոնան, ուր բազմաթիւ ինքնաշարժներ քանդուած են:

Իսրայէլեան զինուորական ալիքները յայտնեցին, որ օդակալներ ուժեղացուցանեցին «անաբեկչական կեդրոններ» «քաթուշա» նետով ուժեղացուցանեցին:

## ԻՍՐԱԵԼԸ ԱՐԳԵԼԱԿԵՑ ԿԱԶԱՅԻ ՕԴԱԿԱՅԱՆԸ ԳՈՐԾԱԾՈՂ ՕԴԱՆԱԻՐՈՒՆ ԹՌԻՉԲԸ

Մէկ շարժումէն մէջ երրորդ անգամ ըլլալով Իսրայէլը երկկ արգելակեց թուրքեր կազայի օդակալներ գործածող օդանաւերուն: Իսրայէլ կ'ըսէ, որ օդանաւերը թուրքերի սխալ ճամբաներու վրայ կը գտնուէին:

Բանակին կողմէ հրապարակուած հաղորդագրութիւն մը կը յայտնէր, որ կազայի օդակալները կ'ըսէին, որ օդակալները կ'անցնէին Իսրայէլի սահմաններէն, որոնց գծով համաձայնութիւն գոյացած է, ինչպէս նաեւ՝ նախապէս բանակը պէտք է տեղեկ պահուած ըլլայ: Իսրայէլեան բանակին հաղորդագրութիւնը կը նշէր նաեւ, որ վերջերս օդանաւեր

## ՀԱՅԱՍՏԱՆ՝ ԵՌԻՆԻՍԷՑԻ ԳՈՐԾԱԾԻՐ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՆԴԱՄ

ԵՐԵՒԱՆ, 4 (ԱՐՄԷՆՓՐԷՍ). - Հայաստան ընտրութեան ԵՌԻՆԻՍԷՑԻ գործադիր խորհուրդի անդամ: Հայաստանի արտաքին գործոց նախարարութիւնը յայտնեց, որ Արեւելեան Եւրոպայի յատկացուած մէկ ամիսը համար իրենց թեկնածութիւնը առաջադրած է ին Ազգային ժողովը: Ընդհանուր 54 քուէներէն Հայաստան ստացած է՝ 39, Ազգային ժողովը՝ 14 քուէ (1 ձեռնպահ):

ԵՌԻՆԻՍԷՑԻ գործադիր խորհուրդի 2001-2003 շրջանի թափուր ամիսներու համար ընտրութիւնները տեղի ունեցած են 3 Մայիսին:

## ՄՈՍԿՈՒՆ, 4 (ՌՈՅԹԸՐԸ) - Մինչ Զեչենիոյ մէջ ուղտակալութեան եւ ըմբոստ գինեակներու միջեւ նոր բախումներու մասին տեղեկութիւններ կը տրուէին, ուղտակալութեան Զինուորները Զինուորները օր դարձեալ մերժեցին չեչէն նախագահ Ասլան Մասխատովի հետ բանակցելու:

«Ինթըրֆաքս» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ հարաւային Զեչենիոյ մէջ Աւթուրի եւ Մախաբեթա գիւղերուն միջեւ յեռնային հողերու վրայ Չորեքշաբթի օր տեղի ունեցած բախումին ուղտակալութեան ուժերը առնուազն 18 ըմբոստ սպաննած են:

Տեղեկութիւնը, գոր կարելի չէ եղած անկախ աղբիւրներէ հաստատել, կը յայտարարէ չեչէն ըմբոստներու կողմէ շարք մը մահացու «թեկնածու» յարձակումներու», որոնց ընթացքին տասնեակներով ուղտակալութեան զինուորները սպաննուած են:

Կրեմլինի Զեչենիոյ հարցերու գլխաւոր բանբեր Սերգէյ Եասթրոմաչուքի յայտնեց, որ անցողի 7 օրերուն արձանագրուած բախումներու ընթացքին, ուղտակալութեան ուժերը 32 գինուոր մահացած է եւ 107 ուրիշներ վիրաւորուած են: Ան ըսաւ, թէ ըմբոստներէն 52 հոգի սպաննուած է:

Ռուսերը կ'ըսեն, թէ անցեալ Օգոստոսին Հիւսիսային Կովկասի մէջ բախումներու ծարր տալէն ի վեր աւելի քան 2000 մարդ կորսնցուցած են:

Լրատու գործակալութիւնները հաղորդեցին, թէ մայրաքաղաք Երևանի մէջ Չորեքշաբթի օր ուղտակալութեան երեք կողմերէն կարճատեւ կերպով կրակոցի ենթարկուած են:



Ռուս զինուոր մը կրակելու պահուն:

Ներկայիս Զեչենիոյ հարաւային յեռնային վրայ ապաստանած ըմբոստները կը խոստարան են, թէ ուղտակալութեան թիրախներու դէմ հայուկային պատերազմ պիտի մղեն:

## ԲԱՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՉԻՆԱՄԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Պաշտպանութեան նախարար Իկոր Սերգէյեւ յայտնած է, թէ Մոսկուայի կողմէ Մասխատովի հետ տեսակցելու միջնորդանքները, թէ Զեչենիոյ ուղտակալութեան հողամասերուն մաս կը կազմէ, ըմբոստներ

Շար. Էջ 10

## ՀԱՅԱՍՏԱՆ - ԻՐԱԳ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան ընդունեց Իրաքի արտաքին գործոց առաջին փոխ նախարար Նուրի Իսմայիլ Ուէյսը, որ աշխատանքային այցով Երեւան կը գտնուի:

Հանդիպումին քննարկուեցան երկու երկիրներու յարաբերութիւններու մակարդակը: Նշուեցաւ երկու ժողովուրդներու միջեւ դարաւոր բարեկամութիւնը: Մասնաւորաբար ընդգծուեցաւ, որ առեւտուրի, արդիւնաբերութեան եւ ուժանիւթի մարզերուն մէջ կան գործակցութեան հեռանկարներ:

Ուէյսը Երեւանի իրապարկութիւնները հրաւիրեց՝ մասնակցելու Իրաքի տարեկան տնտեսական օրը: Հանդիպումին նաեւ քննարկուեցաւ Երեւանի եւ Պաղատի մէջ ղեկավարութիւններ հաստատելու հարցը:

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ՌՈՒՍԱԿԱՆ ՈՒԹԵՐԸ ԱԶՐԴԵՅՃԱՆԻ ՀԱՄԱՐ ՄԱՅՈՒՆ ՎՏԱՆԳ ԵՆ

Կ'ԸՍԵ ԿՈՒԼԻԵՒ

ՊԱՔՈՒ, 4 (ԱՐՄԷՆՓՐԷՍ) - Ազգային ժողովը արտաքին գործոց նախարար Վիլյամ Կուլիեւ յայտնեց, որ Ազգային ժողովը կ'ապաստանուի վիճակի մէջ գտնուող Հայաստանի մէջ հաստատուած ուղտակալութեան խախտումները վտանգի մնալուն աղբիւր են երկրին համար:

Կուլիեւ նկատել տուաւ, որ եթէ Երեւան եւ Մոսկուա համաձայնած են 27 տարի ուղտակալ խախտումներ պահել Հայաստանի մէջ, ապա անհրաժեշտ է, որ Ազգային ժողովը եւ համաշխարհային հանրութեան ուղտակալութեան հրաւիրէ այդ հարցին վրայ:

«ՕՒԱՆ»-ի հետ Պաքուի գործակցութիւնը պէտք է աւելի սերտանայ հակակոչելու համար Երեւան - Մոսկուա ռազմավարական դաշինքը», ըսաւ Ազգային ժողովի նախագահ Կուլիեւ:

## ԿՈՒԼԻԵՒ ԿԸ ՄԵԿԱՐԱՄԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՎԵՐՋԻՆ ՊԱՇՏՈՆԱԶՐԿՈՒՄՆԵՐԸ

Ազգային ժողովի արտաքին գործոց նախարար Վիլյամ Կուլիեւ յայտնեց, որ Հայաստանի վարչապետին եւ պաշտպանութեան նախարարին պաշտօնապարկումները նոր առիթ կու տան Հայաստանի եւ Ազգային ժողովի միջեւ խաղաղութեան նոր բանակցութիւններ կատարելու:

Պաքուի մէջ կայացած մամուլի ասուլիսի մը ընթացքին, Կուլիեւ պաշտօնապարկումները մեկնաբանեց իբրեւ նախագահ Ռոպէրթ Քոչարեանի դիրքի ամրապնդում: Իր կարգին, Վրաստանի նախագահի խորհրդակալ Շալվա Փիշխաձէն ըսաւ, որ այս պաշտօնապարկումներով Քոչարեան ամրապնդեց իր դիրքը: Անոր կարծիքով, 27 Հոկտեմբերի ռճիրը գործադրուեցաւ Ազգային ժողովի հետ յարաբերութիւններու շրջանակին իբրեւ հետեւեալ, եւ ահիկա ուղղուած էր Ռոպէրթ Քոչարեանի դիրքերու քննարկում:

Փիշխաձէն նշեց, որ պաշտօնապարկումներով Քոչարեան ամրապնդեց իր դիրքը, ինչ որ կը նպաստէ Ազգային ժողովի հետ Հայաստանի յարաբերութիւններու շրջանակին:

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿՐՆԱԾ ԱՆԴԱՄԱԿՑԻԸ ԵՐՈՂՈՒԿԱԸ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

Արեւմտեցի դիւանագետ մը ըսաւ, որ Հայաստան եւ Ազգային ժողովի յառաջիկայ ամիսներուն կրնան անդամակցիլ Եւրոպական խորհուրդին: Հայաստան եւ Ազգային ժողովը կրնան միասնապէս խորհուրդին, երբ Յունիսի խորհուրդին ընդհանուր ժողովը թեր քուէարկէ:



ԻՐԱՆ

### ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄԱՆՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Իրանցիները այսօր քուեարկության կեդրոնները պիտի ուղղուին ամբողջացնելու համար նոր խորհրդարանին 290 անդամներուն ընտրությունը: Ընտրության առաջին փուլին 66 պոռոնները թեկնածուներ չէին կրցած ապահովել քուեներու պահանջուած համեմատությունը:

Առաջին փուլին, բարեկարգչական թեք ապահոված էր արեւի քան հարիւր պոռոններ, սակայն պահպանողական խորհուրդներու միջամտություններն ու ճնշումները չեղեալ համարեցին կարգ մը արդիւնքները եւ ցարդ չվաւերացուցին ուրիշները, ինչպէս թեհրանի արդիւնքը, ուր երեսուն պոռոններուն 29, ապահոված են բարեկարգչական ճակատը:

Բարեկարգչական շարժումին ղեկավարները մտահոգ են, որ Փետրուարի ընտրություններին ի վեր իրենց դէմ ձեռնարկուած արշաւն ու յատկապէս բարեկարգչական թերթերու փակուելը յուսալքած են քուեարկողները, որոնք կրնան մեծ թիւերով չմասնակցիլ այսօրուան ընտրություններուն: Եթէ բարեկարգչականներու հետեւորդները չմասնակցին, ապարկեցր բաց պիտի մնայ անցնող երկու ամուսնի ընթացքին յաւայէս պատրաստուած պահպանողական ճակատին դիմաց, որ կրնայ առիթն օգտուելու եւ իրեն յաղթանակ մը տանի կարգ մը շրջաններու մէջ: Այս մտահոգութենէն մեկնած, բարեկարգչական շարժումի ղեկավարները կոչ կ'ուղղեն ժողովուրդին մեծ թիւով մասնակցելու, որովհետեւ մեծ թիւը ցոյց պիտի տայ, որ իրանցիները իսկապէս կ'ուզեն փոփոխություններ տեսնել երկիրին մէջ:

(ՌՈՅԹԸՐԶ)

### ԻՐԱՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿՐՆԱՆ ԱԶԳՊԵՅՃԱՆԻ ՄԷՋ ԶԱՐԻԴԱՏԱՐԻ ՄԸ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՃԻԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ ՍԱՍՆԱԿՑԻԼ

Իրանյեան քարիւղի ընկերություններ ԱզրպէյՋանի մէջ քարիւղի արտադրման խողովակի մը կառուցման աշխատանքները ապահովելու համար կրորնան դիմում կատարել:

Իրանյեյի կառավարությունը կ'առաջադրէ ԱզրպէյՋանի քարիւղի պետական ընկերության ՍՕՔԱ-Բի, որ կ'ընդգրկէ մը յայն ընկերություններուն, որոնք հետաքրքրուած են Պաքու - ձկնհան քարիւղատար խողովակի կառուցման համար ստեղծուելիք անհատական ընկերութեան մը մաս կազմելով:

Այս քայլը կը յաջորդէ ՍՕՔԱ-Բի տնօրէնութեան եւ Իրանյեյի արտադրանախարարութեան յարձրատնիճան մէջ պաշտօնատարին՝ Վիքթոր խարկի միջն տեսակցութեան մը:

Իրանյեյ գործարար կը կանգնի Պաքու - ձկնհան Արտածման Գլխաւոր խողովակի ծրագիրին, որ պէտք է կարենայ Միջերկրականի մէջ բարձրորակ ազերիական քարիւղ ապահովել:

Իրանյեյ էքստր ընկերություններ Շիրակի հանքէն մէջ յետադր ազերիական քարիւղ գնան է՝ գնա-

հատում կատարելու համար եւ գոհունակութիւն արտայայտած է անոր օրակին մասին:

Շահարկողներու առաջարկներու գնահատումը կատարել էտք, Ա. Գ. խողովակի ընկերությունը կրորնայ կազմուել 2000ի վերջերուն կամ 2001ի սկիզբներուն:

Իրանյեյ կ'ուզէ նաեւ, որ իր քարիւղի ընկերությունները մասնակցին ԱզրպէյՋանի մէջ ծովու մէջ կամ ցամաքի վրայ քարիւղի միջազգային ծրագիրներու եւ քարիւղաքիմիայի ներդրման մարզին:

### ԿԻՊՐՈՍԻ ՏԱԳՆԱԴՐ ԼՈՒԾՈՒԵԼՈՒ ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻ

Կ'ԸՍԷ ՓԱՓԱՏՐԵՈՒ

Յունաստանի արտաքին գործընկերարար Յորճ Փափանուրիու յայտնած է, թէ Կիպրոսի բաժանումի հարցի լուծման երկար տեւողութեան վրայ կարելիութիւն կը տեսնուի:

Նախարարը, որ Մ. Նահանգներ կը գտնուէր Թուրքիոյ հետ հաշտութեան ի խնդիր իր տարած աշխատանքներուն համար մրցանակ մը ստանալու համար, Ուաշինկթընի մէջ Չորեքշաբթի օր յայտնած է, որ Յունաստանի, Թուրքիոյ եւ Կիպրոսի մէջ կեցողութեան ընթացքի մէջ կը գտնուին:

Փոփոխութեան հա-

մար այլ տուեալներու կարգին են Եւրոպական Միութեան անդամակցութեան համար Թուրքիոյ թեկնածուութիւնը, Յունաստանի եւ Թուրքիոյ միջեւ գործակցութեան համաձայնագիրները եւ Եգիպտոսի երկու կողմերունու Կիպրոսի կանաչ գիծի երկու կողմերուն միջեւ մարդէմարդ թափ ստացած յարաբերությունները:

Այս թղթակիցներու ըսած է, թէ տակաւին օր յայտնած է, որ Յունաստանի, Թուրքիոյ եւ Կիպրոսի մէջ կեցողութեան ընթացքի մէջ կը յայտնուին:

Փոփոխութեան հա-

կիպրացի ղեկավարներու միջեւ նախատեսուած «անուղղակի» բանակցութեան ընթացքին արեւելի «տայ ու առնելու» կարելիութիւն ցուցաբերել:

Փափանութիւն կը խօսէր նախքան լսելը, թէ Կիպրոսի նախագահ Կլաֆթոս Քլերիտէս վերաբուծութեան պիտի ենթարկուի եւ կրնայ անկարող ըլլալ Մայիս 23ի Նիւ Եորքի բանակցութեանց մասնակցելու:

Փափանութիւն Երեքշաբթի գիշեր Նիւ Եորքի մէջ մրցանակը ստացած է միասնաբար Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Իսմայիլ ձէմի, որուն հետ ան տակաւին տեւաակցութիւն մը ունեցած է Մ. Նահանգներու արտաքին գործոց

նախարար Մատրլէյն Օլպրայթի հետ: (ՌՈՅԹԸՐԶ)

### ԱԼՃԵՐԻՍ

### ԱՐԻՒՆԱԼԻ ԲԱԽՈՒՄՆԵՐ

ԱԼՃԵ, 4 (ՌՈՅԹԸՐԶ) - Աւելի քան 19 հոգի սպանուած են Ալճերիոյ մէջ Չորեքշաբթի օր, երբ խառնական գինեայներ յարձակեցան քաղաքայիններ փոխադրող օթովիւսի մը վրայ, հազարից երկու օրաթերթերը Հինգշաբթի օր:

«Ռիօթ» հաղորդեց, որ գոհերուն թիւը աւելի մեծ է, հաւանաբար 30: Օրաթերթը աւելցուց, որ յարձակումը կատարուած է Պիտալէն Միտիա գաղտնի ճամբուն վրայ, մարտաքողաք Ալճէն 80 քմ. հարած: Լեռնային այս շրջանը կը նկատուի ամուր միջնարկերի Ձիւնեայն իսլամական Շարժումին, որ ցարդ վար չէ առած իր գէնքերը եւ կը շարունակէ գործողութիւնները: «Ուաշինկթըն» հաղորդեց նաեւ, որ գինեայները կեղծ անցարգելի մը վրայ կանգնեցուցած են օթովիւսը եւ ապա՝ փամփուռներու տարափի մը տակ առած ճամբորդները ու Հրոյ ճարակի դարձուցած գանդները: Ապահովութեան ուժերը քառօր ժամ ետք հասած են դէպքին վայրը, ուր կ'արդէն իսկ փայտուտ տուած էին գինեայները:

### ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

ժուլիէի Ս. Յարութիւն եկեղեցւոյ տօնախմբուելիք տարիներու աւանդութեամբ Նոր Կիրակի կը տօնուէր (Ս. Ջատիկի յաջորդ Կիրակին): Այս տարի բացառաբար Անուանակոչութեան եւ Մատաղօրհնութեան տօնակատարութիւնը արժանի շուքով պիտի կատարուի: 7 Մայիս 2000՝ Աշխարհամատարան Կանաչ Կիրակի օրը: Ուստի նուիրատու ազգայիններու կը թելագրուի իրենց սրտաբուլ՝ ոչխար, նիւթական եւ այլ նուէրները փութաղնել եկեղեցւոյ թաղակառութեան կամ հետախօսելի մեծեւեայ բլուրուն՝ 03-302439, 03-762880, 04-402260 եւ 03-717079: ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԻ ԺՈՒՆԻԷԻ Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՎ ԵՎԵՂԵՑԻՑ ԶԱՆՔԱՅԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՆՑԻՑ

### ԻՐԱՆ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵՑ 480 ԻՐԱՔՑԻՆԵՐ

Իրան երկէ կ'ազատ արձակեց 480 իրաքցիներ, որոնք պատերազմի գերիներ էին Իրանի մէջ եւ պատերազմին աւարտէն 12 տարի ետք է, որ Իրաք կը վերադառնան: Մէկ ամսուան ընթացքին, Իրան ազատ արձակած է 247 իրանաբնակներ, որոնցմէ 18 տարիէ հետեւած են իրենց ընտանիքներէն: Իրաքի գերիները Իրաքի լաւճուեցան միջազգային կարմիր խաչի հրակողութեան ներքեւ: Պաղտատ կրք, որ տակաւին աւելի քան հինգ հազար իրաքցիներ քանտարկուած են Իրանի մէջ: Մ. Կարմիր խաչը անցեալ ամսուան մէջ յայտնած էր, որ աւելի քան 4600 իրաքցի գերիներ չեն ուզեր Իրաք վերադառնալ:

նայ, անոնցմէ ոմանք յաջողած են Իրանէն դուրս գալ եւ այլ երկիրներ ճամբորդել: (ՌՈՅԹԸՐԶ)

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՑ ԳՐԱԿԱՆ ԸՐՁԱՆԱԿ  
ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ՑԵՐԵԿՈՅԹ  
Նիւթ՝ ՄԵՐ ՏՈՒՆԸ ԿԱՐԳԻ  
ԳՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ  
Դասախօս՝ Դոկտ. ԵՐՈՒՆՆԻ ԶԱՍՈՒՆԻ  
Հանդիսազար՝ ԱՆԱՀԻՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ-ՅԱՐՈՒՏ  
Կիրակի, 7 Մայիս 2000, կ.ա. ժամը 11:00-ին, Միտքեանս Կեդրոնի մէջ: (Սփիոք փող. Ապու Ռոպան շէք, Լիբ. Կարմիր խաչի Կեդրոնի կից): ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ

ԱԶԳԱՅԻՆ ԱՔՍՈՐ ԳԱՍԱՐՃԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ  
ՀԱՄԱՐՉՄԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻՈՎ  
ԱՒՆԴԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԳԱՇՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ  
ԿԵՐՊԷ՝  
ԳԼԶՊԿԵՐՈՒԹԵԱՄԸ  
ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԻՑ  
ԱՐԱՐԱՏ ԱՀԱՐՈՆԵԱՆ  
● ՀԱՄԱՐՉՄԱՆ ՎԻՃԱԿ ● BINGO ● ՐՈՒՄԵՐՆԵՐ  
ՀԻՆԳՇԱԲԹԻ, 1 ՅՈՒՆԻՍ 2000ԻՆ  
ՄԵԿՆՈՒՄ ԺԱՄԸ 8:30ԻՆ ԶԱՒԱՐԵԱՆ ԳԱՇՏԵՆ  
ՎԱՅՐ ՄԵՅՐՈՒՊԱ  
ՄԱԿ ՄԵՅՐՈՒՆ 12.000 Լ.Ո. ՓՈՔՐԵՐՈՒՆ 5.000 Լ.Ո.  
1998ին ԱՐԱՅԱ 475 ԸՈԳԻ 1999ին ԸԼԱՅԱՆ 490 ԸՈԳԻ  
2000ԻՆ ՄԵՅՐՈՒՊԱ ?

«ԵՍ ԵՄ ԿԵԱՆՔԻ ՀԱՅԸ»  
Հայ Կաթ. Մեքրոպեան  
Բարձր. Վարժարան  
Առաջին Հանդիսադ  
Սուրբ Հաղորդութիւն  
48 աշակերտներու  
Չեանք՝  
Ա.Ր.Հ.Ի. ՀԱՅՐ ՎԱՐԴԱՆ  
ԵՊՍ. ԱՇԳԱՐԵԱՆԻ  
Կիրակի 7 Մայիս 2000, առաւօտեան  
ժամը 8:30ին, Հայ Կաթ. Ս. Փրկիչ եկեղեցի,  
Պուրճ Համուտ:

### ՌՈՒՄԻՍ

### ՓՈՒԹԻՆ ԿԻՐԱԿԻ ՕՐ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԵՐԳՈՒՄ ՊԵՏԻ ՏԱՅ

ՄՈՍԿՈՒԱ, 4 (ՌՈՅԹԸՐԶ).- Վլատիմիր Փութին Կիրակի օր երդում պիտի տայ դառնալու համար Ռուսիոյ լեւոնտիւրիային երկրորդ նախագահը: Հանդիսութիւնը տեղի պիտի ունենայ Կրեմլինի մեծ սրահներէն մէկուն մէջ:

Ի տարբերութիւն նախկին նախագահ Պորիս Ելցինի երդման արարողութեան, Կիրակի օրուան հանդիսութիւնը շատ արեւելի պարզ պիտի ըլլայ:

Փութին Մարտ 26ի ընտրություններուն նախագահ ընտրուած էր քուեներու շուրջ 52 առ հարիւր ապահովելէ ետք, մինչ անոր մրցակիցներէն Համայնավար Կուսակցութեան ղեկավար Կենատի Չուկաւով քուեներու նուազ քան 30 առ հարիւրը ձեռք ձգած էր:

Փութինի երդման արարողութենէն երկու օր ետք ռուսեր Բ. Ալխարիամարտի աւարտին 55րդ տարեդարձը պիտի նշեն: Մայիս 9ի այս տարեդարձը յատուկ կարեւորութիւն ունի երկրի մը համար, որ արեւելի քան 20 միլիոն զոհ տուած է պատերազմին:

### Հ.Բ.Ը.Մ. ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹ. ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ 2000-2001 ՏԱՐԵՇՐԶԱՆ

Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը 74 տարուան պատմութիւն ունեցող երկրորդական, երկրորդ, գիշերօթիկ եւ ցերեկայ վարժարան է: Հաստատութիւնը օժտուած է արդի ուսումնական պահանջները գոհացնող կառոյցներով՝ տարրալուծարաններ, համակարգիչներ, գրադարան, մարզական համալիր:

ՄԿ Հաստատութեան ուսումնական ծրագիրը համապարփակ է:

- Հայերէն լեզու, գրականութիւն եւ պատմութիւն: Այլ նիւթերը՝ անգլերէնով:
- Կր դասաւանդուի աշակերտի ծննդավայրի լեզուն (օրինակ՝ արաբերէն, յունարէն, պուլկարերէն, ռուսերէն, ֆրանսերէն): Ինչպէս նաեւ այլ օտար լեզուի դասաւանդութիւն՝ բարարար թիւով խմբակ գոյանալու պարագային:
- Հայերէն եւ անգլերէն լեզուներու անբարար մակարդակ ունեցող աշակերտներուն՝ մասնաւորապէս դասաւանդութիւն:
- Ուսումնական ծրագիրը հիմնուած է միջազգային չափանիշներու եւ մակարդակներու վրայ, անգլիական GCE «O» Levelի (սովորական մակարդակ) եւ «A» Levelի (յառաջացած մակարդակ), IGCSEի, ինչպէս նաեւ ամերիկեան TOEFL, SAT I եւ SAT IIի պատրաստութեան:
- Աշակերտները կը պատրաստուին բարձր ճանաչում ունեցող ամերիկեան եւ եւրոպական համալսարաններու ընդունման պայմաններուն համապատասխանող ծրագրով:
- Հաստատութեան վկայականը ստացող շրջանաւարտները հնարաւորութիւնը կ'ունենան իրենց բարձրագոյն ուսումը շարունակելու յաջողի համալսարաններու մէջ: (Ամերիկեան, եւրոպական, Հայաստանի, Լիբանանեան):
- Արտադասարանային ծրագրուած գործունէություններէն են՝ նկարչութիւնը, պարարուեստը, երգախումբը, փողերախումբը, լրագիրը, թատերականը, սկաւառական եւ մարզական շարժումները:
- Հաստատութիւնս իր կարելին կ'ընէ նիւթական սահմանափակ հնարաւորութիւն ունեցող բայց ընդունակ եւ շանասէր աշակերտներուն համար:

Հետաքրքրուող ծնողներ կրնան ներկայ ըլլալ տնօրէնուի օրը. Անի Լաչինեանի ելոյթին, որ տեղի պիտի ունենայ Երկուշաբթի, 8 Մայիս 2000, ժամը 20:00ին, Հ.Բ.Ը.Մ.ի Տեւիթեան Կեդրոնին մէջ (հեռ. 04-522842): Տնօրէնութիւնը լսողատեսական միջոցներով պիտի ներկայացնէ հաստատութիւնը, աշակերտական կեանքը եւ ուսումնական ծրագրին շնորհած լայն հնարաւորութիւնները: Նախատեսուած է ընդունելութիւն մը, որ առիթը պիտի ընծայէ արձանագրութեան հնարաւորութիւններու մասին արեւելի տեղեկություններու փոխանակման: E-mail: agbumei@melkonian.ac.cy

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՄԵՍՐՈՊԵԱՆ ԱՐՈՒԵՍԻՏԻՅ ՎԱՐՃԱՐԱՆ  
Պուրճ Համուտ, Արաքս Փողոց, Հեռ: 01/280504 254938/9, Ֆաքս: 01 262955, Email: mesroba@dm.net.lb Web page: www.mesrobian.com  
FOREIGN LANGUAGES, COMPUTER SESSIONS, BUSINESS MAJOR, JEWELLERY DESIGN, HAIR DRESSING, MAKE-UP/COSMETICS, COMPUTER TV & VIDEO REPAIR, ...  
ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍԸՆԹԱՅՔ  
ՉՈՐԵՔԱԹԻ 10 ՄԱՅԻՍ 2000  
ՅՐԱՆՍԵՐԵՆ ԱՆԳԼԵՐԵՆ



**ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԲԱՆԱԶԵՒԻՆ ՄԵՐԺՈՒՄԻՆ ՊԱՏՃԱՌՈՎ**

**ԱԶՆԱԴՈՒՐ ԿԸ ՄԵՐԺԵ ԵՐԳԵԼ ՖՐԱՆՍԱՅԻ ԾԵՐԱԿՈՅՏԻՆ ՄԷՋ**

*Բրիտանական «Լոնտոնի Թայմզ» թերթը հաղորդեց, թե՛ Ֆրանսահայ աշխարհահռչակ երգիչ Շարլ Ազնաուրը որոշած է մերժել 14 Ցուլիսին կայանալիք Ֆրանսայի անկախության տոնակատարության ժամանակ ընթացիկ Մերակոյտին մէջ Ֆրանսայի քայլերի երգելու պաշտօնական հրավերը:*

*Ըստ «Լոնտոնի Թայմզ»-ի, Ազնաուր այս կեցածքն որդեգրած է, որովհետեւ «գայրացած է» Հայկական ցեղասպանության ճանաչում պահանջող ընդհանուր մերժելու ֆրանսական Մերակոյտին վերջին որոշումէն:*

**ԱՔԻՍԱԶՐԱՎՈՅՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՆՇԵ «ԿՈՌԻՆԿ»Ի ՀԻՄՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵԳԱՐՁԸ**

27 Ապրիլին արխագահայութիւնը նշեց «Կուռնկ» մշակութային եւ բարեգործական կազմակերպութեան գործունէութեան 10ամեակը:

Իր հիմնադրութենէն տասը տարի ետք «Կուռնկ»ը ունեցաւ իր գրասենեակը, որուն բացման արարողութեան ներկայ էին արխագահական կառավարութեան եւ խորհրդարանի անդամներ, լրագրողներ եւ այլ պաշտօնական հիւրեր:

Ցայտենք, որ «Կուռնկ» կազմակերպութիւնը նութեան միջոցներ կը հայտնային նութեան եւ թեքնիք պատճառներով կատարուած նոյնանուն թերթի վերահրատարակութեան համար:

Յիշեցնենք, որ «Կուռնկ»ը հիմնական գերակատարութիւն ունեցաւ արխագահական կառավարութեան մէջ: Հետագային Արխագահ գինուորական ձեռքբերումներ ունեցաւ «Կուռնկ»ի նախաձեռնութեամբ ստեղծուած «Քաղաքային» հայկական երկու գումարտակներուն շնորհիւ:

**ՆԱԽԱԳԱՀ ԶՈՉԱՐԵԱՆ ԿԸ ՀԱՆԴԻՊԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻ ՉՆԵՐՈՒՆ ՀԵՏ**

Շարաք. 29 Ապրիլին, Հայաստանի Գալստեան Ռպտիկ Զոչարեան հանդիպում մը ունեցաւ Հայաստանի Համայնքներու Միութեան վարչութեան ներկայացուցիչներուն հետ:

Հանդիպման ընթացքին Գալստեան Զոչարեան ընդգծեց, թէ «Համայնքներու հարցերով պէտք է լիարժէքօրէն զբաղին համայնքները. տեղի հոգերուն համար պատասխանատուութիւն պէտք է կրեն տեղական ինքնակառավարման մարմինները՝ ատոր համար ունենալով ամհրաժէշտ իրաւասութիւններ եւ լիազօրութիւններ»:

Նախագահին գնահատումով, համայնքներու դեկաւարները, միշտ ժողովուրդին մօտ եւ անոր հետ մնալուն շնունդ ունեցող ու մանաւանդ անցող մտահոգութիւններուն քաջատեղեակ անդամներն են:

Հանդիպման ընթացքին բնուեցաւ տարածքային քաղաքականութեան վերաբերող կարեւոր հարցեր եւ թողուց ալ ընդգծեցին տեղական ինքնակառավարման մարմիններու գոյութեան եւ անոնց դերի բարձրացման հետ առնչուող հարցեր:

**21 ՊԱՏԳԱՄԱԴՈՐԻ ՄՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԻ Ա. ԶՈՉԱՐԵԱՆԻ ՀՐԱՎՈՐԱԿԱՆ ԿԱՌԱՐՈՒՄ**

2 Մայիսին Հայաստանի Ազգային ժողովին Համայնքային Կուսակցութեան խմբակցութեան անդամ Խորեն Մարգարեան տուաւ մասնւոյ ասուլիս մը եւ ըսաւ, թէ «ամեն ինչ վաճառուած է Հայաստանի մէջ»:

Իշխանութեան թեւերը կրկին կը փորձեն ամեն ինչ կիսել իրար միջեւ եւ այս վիճակին նկատմամբ մասնաւորապէս Ազգային Պատկերասփիւռի կայանը կ'ունենայ վատ վիճակով դեր:

Խորեն Մարգարեան լրագրողներուն տեղեկացուց, որ 21 Ապրիլին Հայաստանի Համայնքային Կուսակցութեան կազմակերպած հանրահաւաքի ընթացքին ժողովուրդը կուսակցութեան պահանջած էր Գալստեանի ներկայացուցել Հայաստանի սահմանադրութիւնը արմատապէս բարեփոխելու եւ Ռուսիա - Պիեւոուսիա միութեան Հայաստանի անդամակցութեան պահանջները:

Սակայն, ըստ ի. Մարգարեանի, Գալստեան Ռպտիկ Զոչարեան խուսափողական պատասխան տուած է այդ պահանջներուն, միայն համաձայնելով սահմանադրութեան մասնակի փոփոխութեան:

Մարգարեանի տուած մասնւոյ ասուլիսին բուն նպատակը Հայաստանի Գալստեանի հարթարկանցի համար Ազգային ժողովի մէջ սկսած նախաձեռնութեան ընթացքին ծանօթացումն էր:

Մարգարեան ըսաւ, որ ներկայիս հաւաքուած է 21 պատգամաւորի ստորագրութիւն, եւ անոնց անունները չեն հրատարակուած: Երեք պատգամաւորական խմբակցութիւններ ստորագրահաւաքին չեն մասնակցած. իսկ խմբակցութեան մը միայն մէկ պատգամաւոր մասնակցած է:

Մարգարեան հրատարակեց պահանջի իրականացումը հիմքերը ամբողջութեամբ չկրցաւ ներկայացնել, սակայն ըսաւ, որ անոր շուրջ քննարկումներ պիտի ընթանան եւ յաջաքիչայ երկու բերք օրոշուա ընթացքին հարցը վերջնականապէս պիտի պարզուի:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՐԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԴԵՄ ՍԱՀԱՓՈՐԶԻ ԳՈՒԾԸ ԴԱՏԱՐԱՆ ԿԸ ՓՈԽԱՆՑՈՒԻ**

Մայիսի վերջնականութեան Լեռնային Ղարաբաղի նախագահին ղեկմամբ մահափորձի գործը հաւանաբար դատարան պիտի յանձնուի: Այս մասին խօսեցաւ Լեռնային Ղարաբաղի գլխավոր դատախազ Մարտիկ Զուլախեան, արգաստեան «Ազատ Արցախ» թերթին տուած հարցազրույցին ընթացքին:

Ըստ գլխավոր դատախազին, այս պահուստ քննչական խումբը, հակառակ հաւաքուած իրեղէն ապացոյցներուն եւ վկաններու ցուցմունքներու բաւարար քանակութեան, կը շարունակէ ահաբեկչութեան հետ աւելնչուող բոլոր հանցամանքներուն մասնագետներու ուսումնասիրութիւնը: Զուլախեան յայտնեց նաեւ, որ Լեռնային Ղարաբաղի նախագահին ղեկմամբ մահափորձի գործը արդէն քանի մը հատոր կը կազմէ:

**Նախագահութեամբ՝ ՏԻԿԻՆ ՌԱՆՏԱ ՊՐՐԻԻ Կազմակերպութեամբ՝**

**ԼՕՍԻ ՃՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ «ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՀՄԻԿ ՕՐ»**

Տեղի կ'ունենայ Երկուշաբթի, 8 Մայիս 2000, կէսօրէ առաջ ժամը 11:00-է սկսեալ, «Ռիվիերա» պանդոկին մէջ, Մանարա:

ՀՐԱԽԵՐ

**ՀԱՌԲԵՐ ԳԱՐԱԿԵՕՋԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ԳԱՍԱԽՕՍԱՌԹԻՒՆ ՎԿԱՅԱԳԻՐՆԵՐՈՒ ԲԱԸԽՈՒՄ**

Նիւթ՝ ՋԱՆԱԶԱՆ ՄԱՆՆԱԳԵՏՆԵՐՈՒ ԳԵՐԸ ԳՊՐՈՑԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ ՆԵՐՄ

Օր եւ ժամ՝ Ուրբաթ, 5 Մայիս 2000, ժամը 6:30ին

Վայր՝ Գարակեօգեան հաստատութիւն

Գասախօս՝ ՏԻԿԻՆ ԿԱՐԻՆ ԶՈՂՐԱՊԵԱՆ (Հոգեբան դասախօս Ֆրանսական համալսարանի) Վկայագիրներու բաշխում ժամը 7:00ին:

ՏՆՍՐԵՆՈՒԹԻՒՆ

**«ԱԻՄՏՐԻԱՆ ԱՅԺՄ ՉԳՏՈՒՄ Է ԱՆԴԱՄԱԿՑԵԼ ՕՐՁԱՆԻՆ»**

Ստորեւ կու տանք հայրենի «Ազգ» թերթի աստորիապարտութեան Արտեմ Օհանջանեանի հետ կատարած զրոյցի գլխավոր միտքերը ներկայացնող յորուած մը: Հրոյցին մէջ Արտեմ Օհանջանեան կանգարդաւոր Հայ Դատի նկատմամբ որդեգրուած կեցուածքին, ինչպէս նաեւ՝ Աստորիայ մէջ տարուող Հայկական Տեղապահութեան ճանաչումը ապահովելու ջայերուն:

Տեղապահութեան 85րդ տարելիցը նշեցինք մոյս ազգային, լաւատալեց ոգով, ինչպէս սովորաբար: Որեւէ մըր քայլ ցեղասպանագիտութեան ուղղութեամբ չկատարուեն, օտարերկրեայ հայրերը եւ ցեղասպանութիւնների գծով մասնագետներ չհրաւիրուենցին, հասկանալի է պետական պիտոճուն մնա «շտայլութեան» համար գումար չգտնուենց: Միջոցը ենց հրաւիրեալ մասնագետներից կարող էինք տեղեկանալ, թէ նոր փաստաթղթերի, վկայութիւնների յայտնաբերմամբ Հայ Դատի հարցուն ինչպիսի՛ առաջընթաց է արձանագրուել, կարող էինք գործողութիւնների մի ուղի գծադրել եւ միասնաբար ծաւալել քարոզչական աշխատանք: Սակայն քարոզչութեան «բեռն» այդպէս էլ թողուենց առանձին անհատների: Ինչպէս արդէն տեղեկացրել ենք, Հայաստանում է գտնուում Աստորիայուն Հայ Դատի հետեւողական պաշտպան, Տեղապահութեանը նուիրուած շուրջ 70 տեսերիզների հեղինակ, արուեստաբան Արտեմ Օհանջանեանը, որի հետ գուրեցցինք մասնաւորապէս պարզելու, թէ որքա՞ն է հաւանականութիւնը, որ Աստորիայի խորհրդարանը, օրինազծի բեւարկումների արդիւնքուն, կը ճանաչի Հայոց Տեղապահութիւնը:

Շուտի խորհրդարանն ընդունենց Հայոց Տեղապահութիւնը, սակայն չտոհանց. թէ մինչ այդ ինչպիսի բեւադատութեան արժանացաւ մեր իշխանութիւնների բացակայութիւնը Սորթիովի ցեղասպանութիւնների նուիրուած գիտաժողովին: Արդեօք չափից աւելի անտարբեր չէ՞նք Հայ Դատի նկատմամբ, երբ բանը հասնում է միջազգային աստեաններուն այն պաշտպանելուն:

«Իրօք, այս որոշակի անտարբերութիւնը կամ զգուշարողութիւնը որպէս թերութիւն է դիտարկուում սփիւռքահայութեան կողմից, որը մեծ սրտացաւութեամբ է վերաբերուն հարցին եւ համարուն, որ Հայաստանի իշխանութիւնները պիտի առաջինն «աղմեկ» անընդհատ ինչեցնելով 1915ի մասին: Թեպէտ այդ զգուշարողութիւնը էլ բացատրելի է, քանի որ մեր ժողովուն էլ իր լծակներն է գործի գցում մեզ յիշեցնելով դարաբաղեան հիմնախնդրուն իր մասնակցութեան, Հայաստանի շրջափակման մասին. ասուն է Արտեմ Օհանջանեանը: Հայաստանին տնտեսական համագործակցութեան գաղափարի խոստուններ են տրուն: Ողջ խնդիրն այն է, որ յստակ հաշուարկենք, թէ որ պարագայուն ինչ եւ որքան ենք շահելու»:

Որեւէ իրատեսական հիմք ունենց եւթթարելու, որ Աստորիայի խորհրդարանի յայտաքիչայ բեւարկումները կաւարտուեն Հայոց Տեղապահութեան ճանաչմամբ:

«Ոչ, ըստ ամենայնի Աստորիան կը խուսափի 1915ը ճանաչելուց. հետեւուն է պրն. Օհանջանեանի պատասխանը պատճառաբանութեամբ հանդերձ: Ես Տեղապահութեան վերաբերեալ անհաշիլ փաստաթղթեր են հաւաքել եւ դրանք ցոյց են տուել Աստորիայի խորհրդարանուն ընդգրկուն 4 պատգամաւորական խմբակցութիւններին: Մեր հանդիպումների եւ զրոյցների ժամանակ նրանք, միմեանցիկ անկախ, ընդունուն են, որ իրօք 1915ին կատարուածը Տեղապահութիւնը էր, սակայն վերջին պահին կարող են միարդել եւ հակառակ տարբերակի օգտին քուլարելը:

Կտուածարութեան խմբակցութիւնն, ըստ իս, դեմ կը քուլարիլ, իսկ «Կանաչների» խմբակցութիւնը կողմ. բեւականաբար, ընդունում կամ չեն ընդունում սեփական դիրքի շահաւտութիւնից ելնելով: Սա քաղապահութիւնն է, որն «ասուն է», թէ մեր ժողովուն, Մ. Նահանգներից լետոյ, Օ-ԹԱՍԻ երկրորդ հզօր անդամն է, իսկ Աւրստրալան, Եւրոպական շտա երկրների պէս, ձգտում է Օ-ԹԱՍԻ անդամակցութեան:

Ֆրանսայի օրինակն աւելի քան վառ ապացոյց է «պատճուած ընթաստութեան»: Փաստն այն է, որ եւրոպական երկրները, մեղմ ասած, զգուշանուն են մեր ժողովին հակարդելուց: «Խմբակցութիւնների հետ իմ զրոյցներուն հարցը մատուցուն են բարոյականութեան տեսանկիւնից, սակայն քաղաքականութիւնը մարդասիրութիւն, արդարութիւն են միւս գեղեցիկ բարերը իշուն է միայն այն ժամանակ, երբ ձեռնտու է ինչեը, մնացեալը ըստ խօսքեր են, որոնց չարժէ հաւաք ընծայել, շարունակուն է գուրեցակիցս: Մարդասիրութեան ու խաղաղարարութեան «դիրքերից» ոմբակնունց Քոստովոն, ուր այլուն անհնարին է դարձել պոսմիցիների ու ալկանացիների համատեղ գոյակցութիւնը, պարբերաբար ոմբակնուն է իրաքը, թեպէտ այդ փաստերը լոտրեան են մտնուում... Օրինակները բազմաթիւ են, իսկ հիմնաւորունը մէկը միջատել են «խաղաղապահ» մղումներով:

Վերադառնալով Աստորիայի խորհրդարանին շարունակենք միջբերել պրն. Օհանջանեանին: «Խորհրդարանականութիւնը մէկն ինծ առաջարկեց հետեւեալ տարբերակը, որն, իր աւելով, ամենամիջոցներին է տնտնուած իրավիճակուն. նախ-նառաջ լուծել Եւրոխորհրդին Հայաստանի անդամակցութեան հարցը, այնուհետեւ

ունե մուրքիային պարտադրել, որ ընդունի Տեղապահութեան փաստը. եւրոպական խորհրդի անդամ երկրին, այսպիսով, աւելի հեշտ կը լինի հասնել նպատակին»:

Կարելի է ենթադրել, որ եւրոպական Միութեան ու Եւրոխորհրդի անդամ երկրները էլ Հայաստանին այդ պարագայուն է կաջակցեն (Հայաստանին, օրինակ, երբեք չի ընդունի Հայոց Տեղապահութիւնը: Սակայն ի վստախօրեն ասել, քանի որ ընդունել 1915ը զերմանիայի համար կը նշանակել ի լուր աշխարհի յայտարարել իր անմիջական մասնակցութիւնը դարի ես մի ցեղասպանութեան: (Կլաւտեմ պատճառաբանութիւնը, ի դէպ, լսել են մի գերմանուտու շուրթերից — Ա. Բ.): Այնուամենայնիւ, Եւրոպական Միութեան ճամբան բունմ մուրքիային պարբերաբար յիշեցունում է, որ անդամ երկիր դառնալու համար պիտի ճանաչի Հայոց Տեղապահութիւնը:

Սակայն, բնականաբար, Հայ Դատի համար մտահոգութիւն չէ, որ Եւրոպական Միութեանը ստիպուն է պայմաններ առաջարկել մուրքիային կամ ինչ-ինչ տարբերակներ յուլել հայերին: Ըստ Արտեմ Օհանջանեանի Հայոց Տեղապահութիւնը են մուրքիային առաջարկուն միւս պայմանները լուծակաւ պատճառաբանութիւն են այդ երկրի մուտքը Եւրոպական Միութիւն արգելելու:

Մուրքիայն, այր, ուժեղ է Մ. Նահանգների ցուցաբերած հովանարողութեանը եւ կարող է պայմաններ թելադրել ՕՊԱՍուն իր առկայութեամբ, սակայն Եւրոպական Միութիւնը չի հանդուրժի, որ իր մասնիկը դարձած այդ երկրի 20 միլիոն բնակիչները «մերխուժեն» միւս անդամ երկրներ, ազատ էլունուն ունենան այնտեղ եւ համարուն Եւրոպական Միութեան քաղաքացիներ:

Այս սեսանկիւնից դիտարկելով, ըստ մեզ, Հայկական Հարցը միշտ էլ կը մնայ Եւրոպական ու շարքութեան կենտրոնում, որպէս յարմար խաղաքարտ, սակայն կը պահպանի նաեւ մասնակի ճանաչումի կարգավիճակը:

Անդրադարձ կատարելով պատմութեանը ճշգրտենք ես մի հարց. արդեօք զերմանիայի եւ Աստոր-Յունագրիայի դերը Հայոց Տեղապահութեան գործուն աշխարհի վճռորոշ էր, ինչպէս ներկայացունում է մի քանի հետազոտողների կողմից: Արտեմ Օհանջանեանը, որի գիտաժողովուն ունեցած գեղոյցն ամբողջովին խարսխըւած էր այդ գաղափարին, համոզուած է իր տեսակետուն եւ պատրաստ փաստերը ներկայացնելուն: Փաստներն, ի դէպ, հայթայթել է գերմանական ու աստորիական արխիւներից. փաստաթղթեր, որոնց հեղինակը գերմանացի է աստորիականագի դիւանագետներն են այն տարիներին մուրքիայուն գտնուող: 1888ին Աւրստրո-Յունագրիայի դեպիցուն գրուն է, որ հայերին ինքնավարութիւն տալը վերտանգաւոր է. քանի որ Հայաստանն արդէն տարիներ ի վեր որոշակի սահմաններ չունի, եւ արեւմտահայերին ինքնավարութիւն նուիրելը կը նշանակել տարածք «տրամադրել» հայերի վաղեմի դաշնակցին Ռուսաստան: Փաստաբան, ընդունաց գլխավոր թշնամին Ռուսաստանն էր: Առաջնորդունելով «Եթէ ուզուն են թշնամուղ ճշել վմախոր նրա դաշնակցին» սկզբունցով զերմանիան եւ Աստոր-Յունագրիան (այլ երկրների լուլեյան համաձայնութեանը) ուղղորդենք թուրքերի քարդարար գործողութիւնները: «Այդ երկրները միտք ենցին, իսկ մուրքիան ձեռքները ենցին մեր ժողովուն բացարձակ աջակցութիւն ու խրախուսանց չունեանար, մնան լայնածաւալ գործողութիւնների չէր դիմի», համարուն է գրուածակիցս:

Հայերին իրենց տրածաճի տրն էին, ունեին տնտեսական լծակներ, գաւառում էին արհեստներով ու առեւտրով, այսինքն զերմանիան եւ Աստոր-Յունագրիան չէին կարող Արեւմտեան Հայաստանը գաղութ, երկրորդ Տեղակաւտան սարքել: Մունը էր մի ելք տեղահանել հայերին եւ գրաւել տարածքն ու շուկան: 1915ի ղոկտեմբերին Աստոր-Յունագրիայի դեպիցուն գերկուցուն է, որ հայերի տեղահանունը զերմանացիներից է սկիզբ առել: Արտեմ Օհանջանեանը վստախ է, որ միտունաւոր հայաբախութեան այդ ծրագիրը մինչ օրս էլ «կիրառուն» է հայերի հանդէպ, պարագայն հիմա այդ ամէնը «սպիտակ» եղեան է ինչեցունում: Եւ կրկին գլխավոր թշնամին Ռուսաստանն է, սակայն թիրախ է ծառայուն Հայաստանը, այժմ արդէն Արեւելեան Հայաստանը: Մեծ տերութիւնները խեղուն են սեփական սահմաններուն եւ ձգտուն ընդլայնունը, իսկ իրենց ազդեցութեան ոլորտները ամրապնդուն են փոքերի հաշունից: «Այսօր Հայաստանին տնտեսապէս ստիպուն են դարձրել սեփական երկրի տրել լինելուց, վաճառել ամեն ինչ եւ կախեալ վիճակուն պարել, ասուն է պրն. Օհանջանեանը, հիմա էլ նրանց նախային ծրագրերին ենց խոչընդոտ դարձել»: Ըստ նրա եթ հարցն մօտեանը մոյն նաւարային շահի տեսանկիւնից, ապա Ռուսաստանն էլ վստահելի դաշնակից էլ են յանուն նախկին կարող է համագործակցել Ազրայձանի հետ հակառակ դիրք բըունելով Հարաբարի հարցուն:

Իսկ հայերին Տեղապահութեան ճանաչմուն ուղղունւած քարոզչական ցանքերը կարող ենք յաջողունած համարել, եթէ մուրքիան ընդունի գոնէ երկուքնտերի մեղարողութիւնն ու պատասխանատուութիւնը 1915ի 1.5 միլիոն զոհերի համար:

**ԱՆՈՒՑ ԲԱԲԱՅԵԱՆ «Ազգ»**

**ԺՈՒՆԻԷԻ Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ**

Ժուլիէի Ս. Յարութիւն եկեղեցու թաղականութիւնը, կու գայ յայտարարելու թէ, յառաջիկայ Կիրակի, 7 Մայիս, 2000, որ կը սուրբապատի Կանաչ Աշխարհամատարան Կիրակիին, պիտի նշուի եկեղեցու անուանակալութեան տօնը: Նոյն առիթով տեղի պիտի ունենայ մատաղի օրհնութիւն եւ եկեղեցու նորակառոյց դռներուն, սրբանկարներուն, մուսպառներուն եւ խաչքարի օծում:

Պիտի պատարագէ եւ պիտի քարուպէթելիս սուաչնորդ՝

**ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱԶԵՐԵԱՆ**

Սկիզբ ժամերգութեան՝ Ժամը 7:30ին  
Ս. պատարագ Ժամը 9:30ին  
Օծում եւ օրհնութիւն՝ Ժամը 10:30ին  
Քարուպէթ Ժամը 11:00ին  
Մատաղօրհնէք Ժամը 12:00ին

Թաղականութիւն կու գայ հրաւիրելու հաստատեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու սոյն հոգեպարար արարողութեան, հարողըրւելու համար օրուն Ս. խորհուրդով:

**ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԺՈՒՆԻԷԻ Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ**

**Ի ՅԱՐԳԱՆՍ ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՈՒՆԻ ԶՈՂԵՐՈՒՆ ՀՍԿՈՒՄԻ ԵՐԵԿՈՅ**

Հովանարողութեամբ՝

**S. S. ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ. Ի**

(Կաթողիկոս - պատրիարք Տաճն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց)

Նախաձեռնութեամբ՝

**ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՆԵՐՈՒ**

Խօսք կ'առնեն՝

ԵՐԵՍՓՈԽԱՆ ԳՈԿՏ. ՄՈՂԱՄԵՏ ԱՊՏԷԼ ՀԱՄԻՏ ՊԱՅՏՈՒՆ, ՆԱԽԿԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆ ՊՐՆ. ՓԵՆԻ ՀԸԼՈՒԻ, ԳԵՐԱՊԱՏԻԻ ՀԱՅՐ ԳԷՈՐԳ ՎՐԿ. ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 5 Մայիս 2000, Երեկոյեան ժամը 8:30ին, Հայ Կաթողիկէ պատրիարքարանի Նահապակց կոթողին շուրջ, ԸՂԵՖԻԵ:

ՀՐԱԽԵՐ



### ՍՈՒՐԲԵՐՈՒ ԵՒ ՀՐԱՇՔՆԵՐՈՒ ՅԱՐԱՏԵՆՈՒԹԻՒՆԸ

# ՄԱՆՐԱԴԻՏԱԿԻՆ ՈՍՊՆԵԱԿՈԿ

## ՀՐԱՇՔՈՎ ԿԱՏԱՐՈՒԾ ԴԱՐԱՆՈՒՄՆԵՐՈՒ ՀԵՏԱԶՈՏՈՒԹԻՒՆ ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՐՕՆԱԿԱՆ ՌԻՍՈՒՅՈՒՄՆԵՐՈՒ ՏԱՐՈՐԻՆԱԿ ԸՆԴԴՊՈՒՄ ՍԸ ԿԸ ՊԱՐՁԷ

Արդի բժշկություն միջ Հրաշքները այլևս սովորական կը թուլան: Արեան քաղցկեղի նման հիւանդություններ, որոնք մահացու էին քառորդ դար առաջ, այժմ յաճախ դարմանելի են կատարելագործուած դեղերու եւ վիրաբուժութեան միատեղ սպտապործումով: Ականջի միջ տեղադրուած սարքեր լսողութիւն կը պարզեեն խուլներուն, ծիածանի պատուաստումներ տեսողութիւն կը շնորհեն կոյրերուն, բորբոքումի դէմ նոր դեղեր քայլու աւելի կու տան անկարեւորեան, կատարելագործուած քննութիւններ կրոնան մարմնին միջ քաղցկեղի սկզբնաւորութիւնը գտնել, երբ միայն քանի մը բժիշկ փոփոխութեան ենթարկուած է:

Մական Լուրտի միջ (հարաւարեւմտեան Ֆրանսա), ուր ամէն տարի շուրջ 80 հազար անկարներ կ'այցելեն Աստուածածանի նուիրուած սրբապարտ, զուտ աստուածարանական իմաստով հրաշքներ նուազ յաճախակի են: 1881էն ի վեր կատարուած 6700 բուժումներէն միայն 589 իրրեւ «հրաշք» ճանչցուած են կաթոլիկ եկեղեցիին կողմէ, նման բուժումներու թիւրուակազմ վերջին տարիներուն՝ միայն չորս բուժում արձանագրուած է վերջին 4 տասնամեակներուն: Վերջինը՝ մայիսի վերջ յալիստիս թաուագող ուստաւորի մը անակնկալ դարմանումը հաստատուեցաւ 1998ին, կաթոլիկ եկեղեցիին մէկ յայտարարութեամբ:

Նման հաստատումներու յարատեւութիւնը խոտոր կը համեմատի բժշկագիտութեան սրբութեան յաւաքի իմաստեան հետ: Այսուհանդերձ գիտություններ առանցքային դեր ունի հրաշքի համար սրբաբանութեան հետագոտելու գործընթացին միջ, զոր կը կիրարկէ կաթոլիկ եկեղեցին: Նման հրաշքագործութիւններ քննող բժիշկներէն ոմանք իրենց աշխատանքը կը դիւրացնեն բժշկագիտութեան ընձեռած նոր գործիքներով եւ յայտնաբերումներով: Ուրիշներ կը մտածեն, թէ նման արագ յաւաքի իմաստեան անկողնէ կը դարձան իրենց արդէն իսկ խրթին պարտականութիւնը: Իսկ կարգ մը աստուածարաններ սկըսած են հարց տալ, թէ արդեօք գիտական չափանիշներով իրագործուած բժշկագիտական հրաշքներ կարելի՞ է մարդը սրբացնելու ծառայող հիմնաւորումներ համարել:

### ◆ «ԳԱՂՏՆԻ ՈՍՏԻԿԱՆՆԵՐ» ԼՈՒՐՏԻ ՄԵՉ

Բժշկական հրաշքները կաթոլիկ երկու իմբատուումներու կողմէ կը բացատրուին տարբեր նպատակներով, սակայն՝ միեւնոյն ուղեցոյցներուն հիմամբ: Հնումի միջ հրաշքները շուրջ քրնություն կը բացուի, որովհետեւ անոնք երանասցումի կամ սրբաբանի արժանի ըլլալու երկնային հաստատումներ կը նկատուին: Միւս կողմէ, Լուրտի միջ հրաշքները բնականաբար քննութեան ենթարկուիլուն, որպէսզի ուխտավայրին պատկեր կեղծիքով չաղաարուի:

Կաթոլիկ ուսուցումներու համաձայն, հրաշքներ Աստուծոյ շնորհին նշաններն են, որոնք կը յայտնուին անակնկալ պատճառի մը միջոցով, որուն կարելի էլ բանական կամ գիտական բացատրութիւն մը տալ: Հրաշքներ յուսանցքային երեւոյթներ չեն քրիստոնիութեան միջ. ի վերջույ, ամբողջ Հաւատքը հիմնուած է Քրիստոսի յարութեան վրայ, եւ Աստուածաշունչը յայտնուած է հրաշքներու արաձանագրութիւններով, ինչպէս՝ Կարմիր ծովուն ճեղքուիլը եւ Կ հազար հոգիի կերակուումը:

Լուրտը ինքնին հիմնուած է հրաշքի վրայ: 1858ին, ինչպէս կ'ըսէ պատմութիւնը, ազբատ

հոփուեհի մը գիւղին մօտերը քարայրի մը միջ սկսած է Աստուածածինը «տեսնել»: Տեղական իշխանութիւնները փորձած են կարեւորութիւն չտալ անոր տեսիլքներուն: Մական բնակիչները համոզուած էին, եւ քանի մը ամիս ետք ուխտաւորներ սկսան այցելել Փիրենեան լեռներու այս յառաջապահ վայրը: Ներկայիս ամէն տարի շուրջ 5 միլիոն հաւատացեալներ կ'այցելեն Լուրտ: Գիւղական արդէն հարստացած է շնորհիւ ուսելիքի, պանդոկի սենեակներու եւ յուշանուէրներու վաճառքին, որ կը հասնի տարեկան 300 միլիոն տոյարի: Նկատարելի թիւով հիւանդներ հոն սկըսած են այցելել 1875ին: Հոփուեհիին տեսիլքին միջոցով յայտնաբերուած սրբաբան աղբիւրի մը միջ մխրճուելով եւ ազոթերով անոնք պատմած են իրենց հաւատացեալները հրաշքներու մասին: Ց տարի ետք բժշկագիտական գրասենեակ մը հաստատուած է հետազոտելու համար հրաշքով կատարուած բուժումները:

Նման բուժումներ պէտք է համապատասխանեն 18րդ դարուն Պենետիքթ ԺԴ՝ պապին ներկայացուցած չափանիշներուն: Այսինքն՝ հիւանդութիւնը պէտք է անբուժելի ըլլայ եւ ճշգրիտ ախտաճանաչում կատարուած ըլլայ: Ֆիզիքական կամ մարմնի գործարաններու հիւանդութիւնները ընդունելի են, բայց ոչ՝ հոգեբանական ախտերը, որովհետեւ անոնց ախտաճանաչումը դժուար է եւ դարմանումը անհաստատ: Բուժումը, որ պէտք է անակնկալ, վարկենական եւ առանց պապինումի ըլլայ, բժշկական դարմանումը արդիւնք պէտք է ըլլայ: Աւելին՝ անիկա պէտք է առողջական բնական վիճակ պարգեւէ հիւանդին:

Աւելի քան 250 բժիշկներ կը քննեն հիւանդին առողջական անցեալը եւ 3 տարի կը հետեւին անոր հրաշքով բուժումին: Եթէ անիկա տակաւին կասկածներ կը յարուցէ, պարագան կը փոխանցուի 20 մասնագէտներէ կազմուած միջազգային յանձնախումբի մը, որ ամէն տարի ժողով մը կը գումարէ նման հարցեր քննելու համար: Բժշկական այս միութիւններէն ոչ մէկը հրաշքներ յայտարարելու իրաւունք ունի. այդ գործը կը վերաբերի հիւանդին պատկանած թմբի առաջնորդին եւ անոր աստուածարանութեան մասնագէտ խորհրդատուներուն: Բժիշկներուն պարտականութիւնն է պարզապէս ստուգել, թէ արդեօք բուժումը կը գործապնջէ՝ բժշկագիտական ակնկալութիւնները արագութեան եւ տարողութեան տեսակէտէն:

Հիւանդներուն մեծամասնութիւնը բժշկական որոշ դարմանումի կը հետեւի նախքան Լուրտ այցելելը, ինչ որ կը դժուարացնէ գիտություններ ուստատվարին ասպեցութեան միջոց գատորոշումը: Դար մը առաջ նման բարդութիւնները չէին ստեղծուեր: Հիւանդ ուխտաւորները դեղի հաստատութիւն չունէին կամ անոնց ստացած դարմանումի միջոցները սահմանափակ էին: Հետեւաբար բուժումները ւաւելի յատկանշական կը թուէին: Մինչ անցեալին թողախտաւորները ուխտի կ'էրթային Լուրտ, այսօր քաղցկեղի տառապողները փոխարինած են գանոնը:

Կասկած չկայ, որ Լուրտ այցելող հիւանդներ կ'սպտուին ուխտավայրին տանախմբական միջոցորտէն, որուն մասնակիցները անուաւոր աթոռներով կամ պատարակներով տեղափոխուող երիտասարդ թէ տարեց հիւանդներն են: Թէ եւ այդպէս հրաշքագործ բուժումներ կրնայ չպարգեւել, սակայն Միացեալ Նահանգներու միջ կատարուած փորձեր ցոյց կու տան, թէ սրտի գործողութեան ենթարկուած այն հիւանդները, որոնք կ'ազոթեն, նուազ անձկութիւն եւ հոգեկան ընկճուածութիւն կ'ապրին ապաքինումի շրջանին:

# ՀՐԱՇՔՆԵՐՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

## ԱՃՆԱՐԻ ՄԱՆԱԿԱՆ ԿՐՕՆՆԵՐՈՒ ՄԻԱՇԽՈՒԹԻՒՆ ՀՐԱՇՔՆԵՐ ԱՒԵԼԻ ՀԱԻՍԵՒ ԿԸ ՎԵՐԱՔԵՐԻՆ, ԶԱՆ՝ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ: ՄԱՐԴԻԿ ԻՆՉՊԵՍ ԿԸ ՀԱԻՍԱՆ ԱՆՀԱԻՍԱԼԻՆ

Ամէն շաբաթ աշխարհի տարածքին տեղ մը հաւատացեալներ կը հաւաքուին ոգեկոչելու համար Աստուծոյ կամ աստուածներու, սուրբերու կամ իմաստուն բուժակներու հրաշագործութիւնները: Բազմաթիւ քրիստոնեաներ, իսլամներ, իրոններ, պուտայականներ եւ հինդուներ կը պատմեն իրենց պատահած հրաշքներուն մասին: «Նիտզուիք» շաբաթաթերթին կողմէ կատարուած վիճակագրութեան մը համաձայն, չափահաս ամերիկացիներուն 84 առ հարիւրը կը հաւատայ, թէ Աստուած հրաշքներ կը գործէ: 48 առ հարիւրը անձնական փորձառութեամբ կը հաւատայ հրաշքին կամ ակնատես եղած է ուրիշի մը պատահած հրաշքին: Ամերիկացի կաթոլիկներուն 70 առ հարիւրը կ'աղօթ հրաշքի համար, իսկ ոչ քրիստոնեաներու, նոյնիսկ ապաքինուներու 43 առ հարիւրը կը դիմէ Աստուծոյ միջնորդութեան:

Չրաշք սպասող ամերիկացիներուն մեծ մասը դարման կը խնդրէ Աստուծոյ: Ոչ միայն Վատիկանը, այլ նաեւ կարգ մը իսլամական կեդրոններ յատուկ յանձնախումբեր ստեղծած են ընելու համար բժշկագիտական բացատրութիւն չունեցող անակնկալ բուժումներու վաւերականութիւնը:

Սակայն հաւատացեալներու համար հիմնական հարցը ոչ թէ վաւերականութեան կը վերաբերի, այլ հաւատքի: Չրաշագործութեան հիմ թէ նոր պատմութիւնները երկու դերակատարութիւն ունին. առաջին անոնք Աստուծոյ վարդապետութեան կը բացատրեն հաւատացեալներուն, եւ երկրորդ անոնց միջոցով մարդիկ կ'ապրին Աստուծոյ կամ աստուածներու ներկայութեան փորձառութիւնը իրենց կեանքին մէջ: Չետեւաբար, եթէ կ'ուզեն գիտնալ, թէ ինչու մեծ թիւով մարդիկ կը հաւատան հրաշագործութիւններու, պէտք է գիտնանք, թէ իւրաքանչիւր կ'ունենան իրենց համարձակութիւնը:

Չրաշքները ներկայ են աշխարհի բոլոր կրօններուն մէջ: Չճագարեան Չնդկաստանի, ինչպէս նաեւ Միջին Արեւելքի մէջ անոնք նշաններ են հրաշալիքներ են: Իրրեւ հրաշալիք երկիւր կ'առաջին են իրրեւ նշան կը խորհրդանշեն մականցական ուժի մը գոյութիւնը:

Երբ Պուտայ իր հետեւորդները զարմացուցող բարձրանալով, իր մարմինը տարանջատելու է վերակազմելով, ամ պապուցեց, թէ անբողոքութեամբ ազատագրուած է մարդկային գոյութիւնը հակակշռող երկաթ օրէնքներէն: Երբ Սոհաճաւ մարգարէ անագափին մէջ ըլլալ յայտնաբերեց իր ընկերակիցներուն համար, ամ փաստեց ամենագուր Աստուծոյ կարեկցանքը: Երբ Յիսուս մեռելէն բարձրացուց Ղազարուսը, ապացուցեց իր իշխանութիւնը մահուան վրայ եւ նախագուշակեց իր յարութիւնը:

Իւրաքանչիւր կրօնի պատմութիւնը կը բացատրէ, թէ ինչու մեծ թիւով հաւատացեալներ կը շարունակեն հաւատալ անհաւատալիին:

Բոլոր կրօններուն մէջ ամենէն հասարակաց հրաշքները կ'առաջնորդեն սրբավայրերուն մէջ կատարուած աղօթքներու: «Արդի» ժամանակներու ուխտավայրի ամառկութիւնը կրնայ սլիզք առած ըլլալ 2500 տարի առաջ. երբ հանգուցեալ Պուտային աճիւններ իրրեւ մասունք բաժնուած են ցեղապետներուն միջեւ եւ ւաւելի ուշ հաւաքուած են ամբողջութեամբ եւ իրակաշայի Չնդկաստանի գաղմբաբաւոր սրբավայրերուն մէջ: Այնուհետեւ հաւատացեալներ հրաշքներ արեքսած են նման վայրերու մէջ աղօթելով: Չրաշքները ցոյց կու տան, թէ տարբեր կրօններ ինչպէս կը բացատրեն մականցական ուժերու գործունեութիւնը աշխարհի մէջ: Սակայն անոնց երբեք չեն կրնար փոխարինել հաւատքը:

### ԲՐԻՍՏՈՒԹԻՒՆ

Բրիստոնութեան մէջ հրաշքները հիմնականօրէն կը դրսեւորուին հիւանդներու բուժումով: Յիսուս հրաշքներ կը գործէ հաւատքը տարածելու համար կամ ւաւելի յաճախ իրրեւ հակազդեցութիւն իրեն հանդէպ ստեղծուած հաւատքին: Աստուածաշունչին մէջ հրաշքները նշաններ են, որոնք կ'ապացուցեն, թէ Աստուծոյ երկար տեսնելի վեր սպասուած թագաւորութիւնը այժմ ներկայ է Յիսուսի ճամբով: Մեռելները կենցիկ կոչելով Յիսուս նաեւ մեղաւոր մարդկութիւնը կը դնէ Աստուծոյ իր նոր յարաբերութեան մը մէջ. առաքելութիւն մը, որ պիտի ամբողջանայ միայն իր մահով եւ յարութեամբ: Այլ իսուցում, բուժիչ հրաշքները ցոյց կու տան ոչ միայն Յիսուսի կարեկցանքը, այլեւ կ'արտացոլեն Աստուծոյ ուժին եւ սիրոյ տարողութիւնը:

Բրիստոնութեան առաջին դարերուն, անոնք, որոնք կը մեռնէին Բրիստոսի համար, կը պաշտօնէին իրրեւ միջնորդներ մարդուն եւ երկնայինք միջեւ: Անոնց աճիւնները երկրի վրայ հաւատացեալներուն աղօթքը կը բարձրացնէին երկինք: Կաթոլիկները եւ ուղափարները կը հաւատան, որ իրենց մահէն ետք Աստուծոյ վերադարձած սուրբերը կրնան օգնել անոնց, որոնք սրտանց բարիք կը խնդրեն այս կեանքին մէջ:

Բողոքական բարեկարգչական շարժումին հիմնադիրները կը մերժէին կաթոլիկներուն «սուրբերու աստուածութիւնը» եւ զայն կը համարէին հեղձնու ճախապաշարու մը: Սակայն անոնց հետեւորդները շարունակեցին հաւատալ, թէ Աստուած յատուկ նշաններ, այլ իսուցում հրաշքներ կը պարգեւէ հաւատացեալներուն: Ամերիկացի բողոքականներ կը իստեղին տեսիլներու, մարգարէութիւններու եւ վերագործունեներու մասին: Աւելի ուշ անցեալ դարուն, հոգեգալստեան դասանմանը հետեւորդները սկսան հաւատալ, թէ իրենք իրենց սեփական ծիղով կրնան հրաշքներ գործել կամ տեսնել, Յիսուսի առաքեալներուն պէս:

### ԻՍԼԱՄՈՒԹԻՒՆ

Ընդունի մէջ Սոհաճաւ մարգարէն կը մերժէ հրաշագործութեան բոլոր խնդրանքները, յայտարարելով, թէ Ընդուն ինքնին հրաշք մըն է, միակը, որուն կարիքը ունի իսլամը: Սակայն Սոհաճա-

տի կեանքին վերաբերող բանաւոր վաւերութիւններուն (*ահաթիք*) մէջ կը պատմուի անոր գործած բազմաթիւ հրաշքներուն մասին: Ան նաեւ կը բազմապատկէ իր ընկերակիցներուն համար եւ տարբեր հիւանդութիւններ կը բուժէ: Իսլամական աստուածաբանութիւնը յստակօրէն կը գատորոշէ Աստուծոյ մարգարէներուն գործած հրաշքներն (*մուժիզա*) ու ւաւելի ուշ ապրած իսլամական աստուածաբանութիւնը յստակօրէն կը գատորոշէ (*ջարիաթ*): Իսլամ կը նշանակէ յանձնուել Աստուծոյ: Սուֆի խորհրդապաշտներ, որոնք մարմնով եւ մտքով Աստուծոյ կը յանձնուին աղօթքի ճամբով, կը նուաճեն ոգեղէն գիտակցութեան մակարդակ մը, որ *ջարիաթ*ի ճնունը կու տայ: Այսպէս, սուֆի ոգեղէն առաջնորդներ կրնան աղօթները կանխատեսել, հոգիներու կարիքները կարողալ եւ հիւանդներուն օգնել:

Սկիզբէն իսլամութիւնը ունեցած է սուրբերու աշխուժ փաղանգ մը: Բուրանը ինքնին կը խօսի Աստուծոյ բարեկամներուն (*աուլիա-Ալլահ*) մասին: Դարերու ընթացքին իսլամները պաշտելի գտած են կարգ մը տիպարներ, ինչպէս Մոհամմէտի նախախորձ աղջիկ զաւակ Զաքիանք: Շիիներուն համար մարգարէին փետան Ալի Իպս Ապի Թալիպը նոյնիսկ կը գերազանցէ Սոհաճաւը իրրեւ Աստուծոյ հետ միջնորդ: Հաւատացեալ իսլամներ կը պաշտեն իրենց սուրբերը, կը պահպանեն անոնց աճիւնները, կը խնդրեն անոնց պաշտպանութիւնը եւ կը հայցեն անոնց օրհնութիւնը:

### ՄՈԿՏԻԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Չրեաները ամենէն քիչ կը հաւատան հրաշքներու: Պատճառներն մէկը ինքնին երայական Աստուածաշունչն է: Չրաշքները աստիճանաբար կ'անհետանան, մինչ Աստուածաշունչը կը հասնի իր ւարդին: Շննդոցի մէջ միայն Աստուած հրաշքներ կը գործէ: Սակայն Մոկտիս յայտնութեանց ետք հրաշքներու վրայ հակակշռող Աստուծոյ իշխանութեան կ'անցնի անոր մարգարէներուն: Անոնք ժողովրդային բազմութիւններու ուղղուել ւաւելի անձնական փորձառութիւններ կը գտնան: Ի վերջոյ, երբ Աստուածաշունչի գոյութիւններուն մէջ Աստուած այլեւս չի յայտնուիր, հրաշքներ եւս կ'անհետանան:

Բարեպաշտ մոկտիսականներ կը հաւատան, թէ կեանքը ինքնին հրաշք մըն է: Այսուհանդերձ թալմուտեան գրականութիւնը կը բովանդակէ հրաշքներու պատմութիւններ ջանի մը մարգարէներու մասին, որոնք մոկտիսական օրինաբար *Թորայի* մէջ խորատուզուելով հրաշագործութիւններ կատարելու ուժը ստացած են: 18րդ դարուն մոկտիսական խորհրդապաշտութիւնը ստեղծած էր *ցատիք հա-տորի* տիպարը, անզուգական սըրբութեամբ տըր բարբի մը, որուն հոգին արմատական էր անաւելի բարձր ուղղուած մը մէջ: Այս ձեւով անաճանց մըն էր Աստուծոյ օրհնութեան եւ մարդկային հաւաքակնութեան միջեւ եւ իր ժողովարդին համար բարիքներ կը խնդրէր Աստուծոյ: Մինչեւ այսօր նման բարբիներ սուրբերու նման կը պաշտուին եւ անոնց գերեզմանը ուխտավայրի կը վերածուի:

Մոկտիսական փիլիսոփայութեան մը համաձայն, նման բարբի մը կրնայ հրաշքներ գործել, երբ նախազգացում ունենայ, թէ հիւանդութիւն մը կամ դժբախտութիւն մը Աստուծոյ կամքին արտայայտութիւնն է: Ան կը խնդրէ Աստուծոյ փոխել իր կամքը: Սակայն ւաւելի յաճախ ան կը փորձէ սրբազան իրերու եւ տասնաբանեաներու ճամբով առանցք մը բանալ հաւատացեալներուն եւ Աստուծոյ միջեւ:

### ԱՍԻԱԿԱՆ ԿՐՕՆՆԵՐ

Աւելի քան 3 հազար տարի է ի վեր Չնդկաստան ապրող սուրբերու երկիրն է: Անիկա նաեւ շուրջ 3 միլիոն տեղական աստուածներուն աստուածութիւններ երկիրն է: Այսուհանդերձ բոլոր աստուածները Բացարձակին (Պրահման) տարբեր մարմնաւորումներն են: Այնպէս, ինչպէս հինձնական աստուածները կրնան ստիւղ մարդկային կերպարանով, նոյնպէս հինձնու սուրբ մը կրնայ հասնի աստուածային գիտակցութեան: Չետեւաբար, ինքնախորհրդաւորութեամբ եւ *տոկայի* վարժութիւններով կարելի է գտնել էութեան միախառնուած աստուածային բնոյթը: Այս առումով մարդկայնութեան եւ աստուածայնութեան միջեւ տարբերութիւնը նոյնքան յստակ չէ, որքան արեւմուտքի մէջ:

Չինտու եւ պուտայական կրօններ յստակ պատկերացումներ ունին այս ուժերուն կամ «գեր-գիտակցութիւններուն» մասին որոնք կրնան հասնի ինքնախորհրդածական վարժութիւններ կիրարկողները: Այս գիտակցութիւններէ մէկը կը վերաբերի անձի մը նախորդ կեանքներուն, ինչպէս նաեւ մէկ վայրկեանի մէջ երկար տարածութիւններ կորելու եւ այլոց մտքներուն մէջ թափանցելու կարողութեան: Սակայն պուտայական սուրբերը կը գոզւանան այս ուժերը բացայայտել, վայնալով, որ այդ ձեւով կ'աշխուժացնեն իրենց «ես»ը, զոր կը փորձեն յարթահարել: Պուտայական կրօնագետ մը Գուան Չուս կը բացատրէ, թէ գերբնական ուժերը իրրեւ ուսուցման միջոց պիտի կրնանցնեն իրենց արդիւնաւետութիւնը բանականութեամբ յատկանշուած եւ գիտական բեքումով ընկերութեան մը մէջ: Պուտայական բազմաթիւ հրաշքներ գործած է հետեւորդները Բարդաւելու համար, սակայն իր առաքեալներուն թելադրած է իրենց ուժերը հրապարակաւ չցուցադրել ետապաշտութեան մէջ չխելու համար:

### Պարտասպից Լ. ԿԻՒԷԼՅԱՆ - ՍՐԱՂԵԱՆ

## ԻՆԹԵՐՆԵՒԻ ՊԱՇՏՊԱՆ ՍՈՒՐԲԸ

Ի տարբերութիւն երանացումի եւ սրբացումի վերաբերող հաստատ օրէնքներուն, պահպան սուրբերու բնութիւնը քիչ մը պատահական է: Մակաւաթիւ պահպան սուրբերու անունները պաշտօնագէտ յայտարարուած են պապիկ կողմէ: Աստիսի Ս. Քլէրը, որ կ'ըսէի, թէ հետաւորը ոչ պարզ կը տեսնէր եւ կ





